ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ
ԵՒ ՇՈԹՈՌԿԱՆՑ ՏՈՀՄԸ

Ա.

Անիի շրջանից, տարաբաղդաբար, շատ քիչ ձեռագիրներ են հասել մեր ձեռքը, և խօսքը չի վերաբերում Բագրատունեաց և աւելի հին շրջանի Անիին միայն, այլ և Զաքարեանց ժամանակին։ Վաճառականութեամբ, ճարտարապետական բարձր արուեստով, կեանքի ճոխութեամբ և փարթամութեամբ ուռճացած այդ քաղաքը, ինչպէս նկարագրում է մեզ Լաստիվերտցին, կամ Զաքարեան շրջանի նիւթական մշակոյթի մնացորդներն են ցոյց տալիս, ակադեմիկ Մառի պեղումներով երեւան հանուած, չէր կարող ձեռագրական արուեստի մէջ եւս գլուխգործոցներ չստեղծել։ Բայց բուն Անիից, գրեթէ ոչինչ ունենք, եթէ չհաշուենք Պետրոս Գետադարձի ժամանակի մեզ հասած մի երկու ձեռագիրները. Անին շարունակ կողոպուտների ենթարկուելով, սելջուկեան, մոնղոլական և յետմոնղոլական շրջաններում, կողոպտուել է կամ ոչնչացման ենթարկուել, յատկապէս, թանգարժէք և թեթև փոխադրելի մնացորդներով, որոնց թւում և ձեռագիրներն են։

Անիին կից վանքերից Հոռոմոսի վանքն է, որ ամենից աւելի դեր է կատարել մանրանկարչական և գրչութեան արուեստների կեդմից. տաճարների բազմութիւնը և արձանագրութիւնների յաճախութիւնը ԺԱ. դարից սկսած, բայց մանաւանդ ԺԳ. և նոյն իսկ ԺԴ. դարու առաջին կիսում, մեր ձեռքը հասած մի քանի մնացորդներն ու տեղեկութիւնները հաստատում են այդ իրողութիւնը (1)։ Մեզ յայտնի հնագոյն ձեռագիրն այդ վանքում, գրուած է 1181 թուականին, Յովհաննէս գրչի ձեռքով, «հրամանաւ Վարդանայ երէց եղբաւր իմոյ եւ ուսուցչի, եւ սատարութեամբ կրտսեր եղբաւր աշխարհաւարի՝ Գրիգորոյ», «ի թուիս Հայոց. ՈԼ. ի տիեզերահռչակ վանս Հոռոմոսի՝ ընդ հովանեաւ սուրբ Յովաննիսի, ի հայրապետութեան տեառն Բարսղի, եւ յառաջնորդութեան ուխտիս Խաչատրոյ, եւ ի հոգեւոր տեսչութեան Կարապետի ծերայելոյ իմաստիւք ի Քրիստոս»։ Այս յիշատակարանից մի հատուած նմանահանութեամբ տալիս է Ալիշան (1), որից կարելի է տեսնել, թէ ի՛նչպիսի բարձրութեան և գեղեցկութեան էր հասել այդ տեղ գրչութեան արուեստը։ Ձեռագրի մանրամասն նկարագրութիւնը տալիս է Բարսեղ Սարգսեանը (2), որից երեւում է, թէ արուեստը զուտ արեւելեան է, և հաւանօրէն, աւանդութիւն դարձած վանքի գրիչների և նկարիչների համար, որովհետեւ նոյն վանքում յետագայում պատրաստուած ձեռագիրներն էլ նման բնոյթ ունին, որոնց մասին պիտի խօսենք այստեղ։

Բ.

Հոռոմոսի վանքի համեմատաբար ամենից աւելի մեզ ծանօթ գրիչն ու նկարիչը Իգնատիոսն է, որ և ներկայ ուսումնասիրութեան առարկան է։ Հնագոյն ձե-

---

(1) Բացի այստեղ յիշուելիքներից նաեւ Հաղբատի Նշանաւոր աւետարանը, Գետաշէնից բերուած մեր ձեռքով որ կազմուել է «հրամանաւ հաւր Մխիթարայ» «ի վանս Հոռոմոսի». կազմողն է Աբրահամ եւ նկարիչը Մարգարէ։ Ձեռ. էջմ. N 3613, Սամուէլ Անեցու ժամանակագրութիւնը առանց յաւելումների, արեւելեան, հին բոլորգրով, որ գրել է Մխիթար գրիչ Անեցի, 2Cբ. «Զյետնեալս յարդիւնական գործոց, զչուառ. գրիչս. զՄխիթարիչ Անեցի, ուսանուն աբեղայ եւ աշակերտ բանի ի վանացն Հոռոմոսի. սնեալ առ ոտն սուրբ Յովաննիսի, յիշեսջիք ի Քրիստոս աղաչեմ»։ Երեւանի Թանգ. N 99|94 աւետարանի ոսկերչական կազմը, տե՛ս մեր «Մի էջ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութիւնից». Տաթեւ վեցերորդ գիրք. նաեւ առանձին գըրքոյկով. Հալէպ. 1930. պրակ Ը։

(1) Շիրակ. 27։

(2) Ցուցակ Վեննայի. Մխիթ. եր. 381։